ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,

2) բարձրագույն կրթությունը,

3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,

4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/,

5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,

6) Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակների հետ, իսկ բնօրինակները վերադարձվում են հավակնորդին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է փաստաթղթերը ներկայացնել Զորակերտի միջնակարգ դպրոցի կառավարման խորհրդին:

Փաստաթղթերն ընդունվում են Զորակերտի միջնակարգ դպրոցում՝ 20.03.2021թ-ից մինչև 18.04.2021թ.-ը, ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. ապրիլի 27-ին, ժամը 13:00-ին՝ Զորակերտի միջնակարգ դպրոցում:

Մանրամասների հետ ծանոթանալ ՀՀ Շիրակի մարզի Զորակերտի միջնակարգ դպրոցում /հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Զորակերտ, փ.3, շ.3/:

հեռ. /094-09-30-07_/

ՀՀ Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝ Վ.Զափանյան